

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2016 թվականի հունիսի 1-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2015-2016 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:
2. Ուսանողական հարցումների վերլուծությունների արդյունքում գործողությունների պլանի մշակում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ /զեկուցող՝ ԲՆՖ դեկան՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ ամփոփիչ ատեստավորումն անցել է բարեհաջող, չներկայացած ուսանողներ չեն եղել, մեկ ուսանող Սերվիս բաժնից ստացել է անբավարար գնահատական: Ընթերցվեցին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Բակալավրիատում գերազանցության դիպլոմի արժանացան 12, մագիստրատուրայում՝ 8 շրջանավարտներ:

Որոշեցին – Ի գիտություն ընդունել հանձնաժողովների նախագահների կարծիքներն ու նկատառումները:

Պաստրաստել ամփոփիչ ատեստավորման հաշվետվություն՝ համալսարանի գիտական խորհրդի առաջիկա նիստին ներկայացնելու համար:

Լսեցին – Ուսանողական հարցումների վերլուծությունների արդյունքում գործողությունների պլանի մշակման վերաբերյալ հարցը /զեկուցող՝ ԲՆՖ դեկան՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս ուսանողների բավարարվածության աստիճանը, իսկ առկա խնդիրները և թերությունները վերացնելու համար անհրաժեշտություն կա կազմել գործողությունների հստակ պլան:

Որոշեցին – մեկշաբաթյա ժամկետում կազմել գործողությունների պլան և ընդունել ի կատարումն:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Մ. Հ. Հովհաննիսյան